ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
«ՎԵԴՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ»
ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ
г.ВЕДИ
ВЕДИНСКИЙ РОДДОМ
ЗАО

ք. Վեդի, Գայի 1
234 2-16-23
ՀՎՀՀ 04104551

N 22

<< 26>> հունվարի 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ -11/6» ծածկագրով շրջանակային
համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր մասնակիցների
ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

<u>Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում «ՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/6-2015/9»</u>

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել «Վեդու ծննդատուն» ՓԲԸ, ք. Վեդի, Գայի 1, հաշվապահություն, մինչև 2015թ փետրվարի 6-ը ժամը 14:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գնորգ Ամիրջանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ՝ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի շենքում, ք.Վեդի, Գայի 1 հասցեում, հաշվապահությունում, 2015թ. փետրվարի 6-ը ժամը 14:00-ին:

Գնման ապրանք է հանդիսանում **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար **«Ավտոպահեստամասերի»** ձեռքբերումը:

**«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար **«Ավտոպահեստամասերի»** մատակարարման (մատուցման, կատարման) (որոնք կազմված են 4 չափաբաժիններից). տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման ապրանքի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանները ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի ամբաժանելի մասը, որի նախագիծը ներակայացված է հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5). ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն.

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ–ՇՀԱՊՁԲ -11/6» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

*Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:*

*Հարգանքով*

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ.Մաթևոսյան

**Կատարող՝ Գևորգ Ամիրջանյան**

**Գնումների համակարգող, հեռ.091-27-71-56**